

համար. ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ԵՆ ՕՐՀ-
ՆԵՑԻՑ ԶՏԷՐ. իսկ քանի որ անորոշ են
խրատադիրները վերջապետութեան՝ դու-
ցէ նաեւ ի ՏԷՐ ՊԱՐԾԵՍՑԻՆ ալ միասին
կ'ըսեն՝ պաշտօնեաներուն հետ:

Ամփոփոյքէս կը տեսնուի, քիչ մ'աւելի
յայտնի կերպով, թէ որքան կշռադատ բա-
ժանում եղած էր ԺԳ. դարու պատարադի
արարողութեան աղօթքներու եւ շարժու-
ձեւերուն, սպասաւորներու եւ ժողովուրդ-
դին ունեցած մասերուն մէջ: Մանաւանդ
ժողովուրդին տրուած կարճ աղօթքները
չառ կը դիւրացնէին անոնց մասնակցու-
թիւնը Գերադոյն Զոհին խորհրդակա-
տարման. եւ միանգամայն աւելի ուշա-
դրութեամբ եւ եռանդեամբ կրնային հե-
տեւիլ պատարադի ընթացքին:

Աւստոս որ նոյն իսկ ձեռագիրներէն մի
քանի հատը, ժողովուրդին ինկած այն
պատասխաններէն շատերը դպիրներուն
սեւ կու տան, այնպէս որ Փառէն Սրբա-
ղանի հրատարակած ուսումնասիրութեան
մէջ պորձածուած Արճիշեցիի տպագրու-
թիւնը բոլորովին զուրկ է ժողովուրդի
մասերէն:

Ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ ապագային
կարենայինք կրկին ժողովուրդին վերա-
դարձնել անոնց յարմար մասերը, որպէս
զի աւելի արդիւնաւոր կերպով կարենա-
յին հետեւիլ սուրբ պատարադի հոգեպա-
րար արարողութեան:

(Վերջ)

Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

ԳՈՎՔ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Կ'ուզե՞ս ըմպել
Առուակներէն, ծաղիկներէն,
Այգաբացի ցայթաղբիրէն
Գարունի խանդն ու խայտանք...
Օ՛ն, մօտեցո՛ւր բաժակի պէս,
Շրթունքներուդ ծաբան անձուն,
Որպէս աղբիւր ու վարդի բոյր,
Սա Մանուկի այտերուն:

Կ'ուզե՞ս տեսնել
Սա երկնքի նայուածքը ջինջ,
Ազամանդի շողիւմն ամբիծ,
Ցատակը լուրժ լինքերուն.
Օ՛ն, սեւեռէ՛ նետն աչքերուդ,
Կարօտանքի նրման քրքուն,
Երազի պէս լուռ, հոգեգրաւ,
Սա Մանուկի աչքերուն:

Կ'ուզե՞ս վառել
Ամմեղութեան բոցով պայծառ
Ու հրմուսնքի շողերով վառ
Ջահը շէնշող քու տունիդ...
Օ՛ն, պինդ գրկէ՛ կուրծքիդ վըրայ,
Որպէս Սիրոյ Արեւ փառփուն,
Որպէս երկինք աստեղավառ,
Սա Մանուկի Սիրուն անհուն:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆ ՎԱՐԳԵՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ

(Թուական 460-473, Դեկտեմբեր 14)

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆԵՍԵԱՆ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1963, ք. 4-8, էջ 137)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻ

Շուշանիկ - Դուստր վարդան Մամիկո-
նեանի եւ կին Վաղգէնի
Վաղգէն - Բդեշխ Գուգարքի
Սողոմէ - Նաժիշտ եւ մտերիմ Շուշանիկի
Ջուջիկ - Եղբայր Վաղգէնի, հիւանդոտ եւ
տկարակալ
Օհան - Եպիսկոպոս Յուրտաւ քաղաքի
Վաչէ - Որդի Շուշանիկի (չառ փոքր)
Ջարուհի - Դասընկեր Շուշանիկի
Սիրուշ - Դասընկեր Շուշանիկի
Պողտան - Դահապետ Վաղգէնի
Երկու քրմուհիներ
Երկու մանկալարիկներ

Տեսարանը կը ներկայացնէ շքեղ պալա-
տի մը դահլիճը. բազմոցներ, քիկնաքոռ-
ներ, գորգ եւ սեղան մը: Անկիւնները
շահեր: Պատէն կախուած են գէմքեր եւ
անասունի կմախքներ: Մէկ անկիւնը՝ Տի-
րամօր պատկեր մը: Երկու մանկալարիկ-
ներ կանգնած են մէկ մէկ անկիւն:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Շուշանիկ առանձին

Շուշանիկ - (Միմակը, գետնի վրայ
ձնբաղիր, ձեռնամաձ, Տիրամօր պատկե-
րին առջեւ բարձրաձայն հեկեկալով կ'ա-

ղօքէ) Ո՛վ Մայր սիրելի, քու խաչուած
Որդիկդ սիրոյն համար՝ ընդունէ՛ իմ ար-
տասուալից աղօթքս. փրկէ՛ իմ զաւակ-
ներս ուրացութեան սեւ անունէն: Ա՛ն ա-
նոնց հոգիները, ես կ'արեմ փոքրիկ պա-
տանքները, քան զեւերուն զոհուին:

Քիչ ատենէն Վաղգէն կը հասնի՝ Յուգա-
յի պէս համբուրելով զիս մատներու: Լոկ
դուն կը հասնինս մօր մը վիշտերը: Այն-
պէս կ'արտասուեմ, ինչպէս Խաչին տակ
դուն լացիր: Օղնէ՛ ինծի, օղնէ՛ ինծի...:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Սողոմէ եւ Շուշանիկ

Սողոմէ - (Ներս՝ գալով) Ամբողջ դիշերն
արցունքով անցուցիր. ելի՛ր, պատառ մը
հաց կեր եւ դորացիր:

Շուշանիկ - Ա՛հ, Սողոմէ՛, Սողոմէ՛. ես
իմ զաւակներս կ'ուզեմ, զաւակներս (չատ
ցաւագին. ապա ոտքի ելլելով կը կանգնի
եւ ուժգին շեշտ անում) Վաղգէն, զաւակ-
ներս քեզմէ կ'ուզեմ: Դուն չես ճանչնար
վարդանի աղջիկը: Կը մեռնի, բայց չի
ձուր:

Սողոմէ - Տիրուհիս յուսահատելու չէ.
ես յատահ եմ որ իշխանները պիտի դի-
մադրեն իրենց հօրը. քեզ աւելի կը սի-
րեն՝ քան թէ զինքը:

Շուշանիկ - Շա՛տ փոքր են, Սողոմէ՛.